

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՐԱԲԿԻՐԻ


ՀԱՅԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
ՄԻՈՒԹԵԱՆ



1914

ՅՊԱՐԱՆ ԿԱՌԱՅՈՒՄԻ

ՊՕՍԹՕՆ





Նկատի ունենալով, որ ցորչափ Հայրենիքը ազատագրւած չէ, Հայ Ժողովուրդը դատապարտւած է մնալ զինքը չբնապատող վայրենի խուժանի յարձակումներուն ենթակայ եւ զոհը դառնալ անոնց վայրագութեան, եւ հաւատալով որ միայն մէկ միջոց կայ անոնց հակադրելու — ակն ընդ ականի սկզբունքը. նկատելով նաեւ, որ քաղաքական կազմակերպութիւնները չեն կրնար բաւարարութիւն տալ առանց Ժողովուրդին տեղական ինքնազործունէութեան՝ մենք՝ Լօրէնսի արարկիրքի երիտասարդութիւնս երկար խորհրդակցութիւններէ վերջ՝ կազմակերպեցինք Արարկիրքի Հայերու Ինքնապաշտպանութեան Միութիւնը, որուն ամէն մարդ կրնայ անդամակցիլ առանց կուսակցական խտրութեան, որ կյարդէ կանոնադիրը ։

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՐԱԲԿԻՐԻ

ՀԱՅԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ
Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

Ա Ն Ո Ի Ն

ՅՕԴ. 1.— Միութեանս անունն է Արարկիրի Հայերու Ինքնապաշտպանութեան Միութիւնն :

Ն Պ Ա Տ Ա Կ

ՅՕԴ. 2.— Արարկիրի Հայերու Ինքնապաշտպանութեան Միութեանս նպատակն է փրօփականտով, նիւթական եւ բարոյական աջակցութեամբ Արարկիրի և շրջանի գիւղական համայնքները ինքնապաշտպանութեան պատրաստել :

Մ Ի Զ Ո Յ Ն Ե Ր

307. 3.— Միութիւնս իր նպատակին հասնելու համար հետեւեալ միջոցները կորդեղրէ: Ա. Կարելին ի գործ դնել արտազաղբի հոսանքը դադրեցնելու, իբր մեր ամենէն մեծ թշնամին: Բ. Երկիր դացողներու դիւրութիւններ ստեղծել նիւթական եւ բարոյական աջակցութիւնով: Գ. Ուղղակի նիւթական նպատակ հասցնել:

307. 4.— Ամէն արարկիբցի որ կիտրահի թէ ինքնազաշտպանութիւնը անհրաժեշտ պէտք մըն է բոլոր մարդոց համար ընդհանրապէս եւ մեղ պէս ազգերու համար մասնաւորապէս, կրնայ միութեանս անդամակցել, պայմանով որ կանոնադրի յօդաւանդներուն համամիտ լինի:

307. 5.— Ամէն նոր անգամ կվճարէ իբր մուտք մէկ տօլար եւ ամսական 25 սէնթ:

307. 6.— Միութիւնս կաշխատի որ ուրիշ մասնաճիւղեր եւս կազմելին, եւ երբ շատնան մասնաճիւղերը, տարեկան համաժողովներ գումարելով կեդրոնական վարչութիւն մը ստեղծեն բոլոր մասնաճիւղերու հետ յարաբերութիւն պահելու եւ անոնց վրա հսկելու համար:

307. 7.— Իրաւասու ընկերներ միայն կրնան պաշտօնի կոչելի. անոնք, որոնք

ամբաստանութեան տակ չեն դանւիր եւ իրենց տուրքերը ամբողջութեամբ վճարած են:

307. 8.— Միութիւնս հետեւեալ մարմինները կունենայ. Ա. Մասնաճիւղ եւ վարչութիւն, Բ. Կեդրոնական վարչութիւն եւ Գ. Պատրաստ մարմին:

307. 9.— Մէկ քաղաքի մէջ միայն մէկ մասնաճիւղ կրնայ կազմել:

307. 10.— Հինգ կամ աւելի արարկերցիներ դանւած այն վայրերը, որ կը փափաքին մասնաճիւղ կազմել, կը իմեն մօտակայ մասնաճիւղին եւ տեղեկագրեն կեդրոնական վարչութեան:

307. 11.— Մասնաճիւղերը պարտաւոր են ամիսը անգամ մը անդամական ժողով գումարել:

307. 12.— Մասնաճիւղերը պարտաւոր են իրենց տեղափոխած ընկերներուն յանձնարարականները դրիկել, նշանակելով տուրքերուն որչափ ազատիկ կամ վճարած ըլլալը:

307. 13.— Մասնաճիւղերը յաճախ ժողովներ գումարելու են միութեանս նպատակը բացատրելու համար:

307. 14.— Մասնաճիւղերը հաւաքաբար պատասխանատու են միութեան գոյգին եւ դանձին համար:

ՅՕԴ. 15.— Մասնաճիւղերը իրաւունք չունին միութեանս անունով հանդանակւած դրամը արգէն որոշւած գործերէն դուրս (հրապարակային ժողով, գլխանական ծախսեր եւայլն) ուրիշ ոեւէ նպատակի յատկացնել:

ՅՕԴ. 16.— Մասնաճիւղերը պարտաւոր են իրենց գանձին մէջ հաւաքւած դրամները պարբերաբար ղրկել կեդրոնական վարչութեան, պահելով գումար մը տեղական ընթացիկ գործերու համար:

ՅՕԴ. 17.— Միութեանս ելեւմտական տարին կսկսի յունվար 1ին եւ կվերջանայ դեկտեմբեր 31ին:

ՅՕԴ. 18.— Մասնաճիւղերը կունենան իրենց վարչութիւնները: Ատենապետը կը կառավարէ ժողովները, կհսկէ կանոնագիրի գործադրութեան եւ կստորագէ մասնաճիւղի բոլոր պաշտօնական թուղթերուն տակ ատենադպիրին հետ:

Ատենադպիրը կկատարէ մասնաճիւղի բոլոր գրաւոր գործերը, կպահէ գլխանական թուղթերը:

Գանձապահը կպահէ մասնաճիւղին անունով ղրկւած դրամները, կարձանագրէ ելեւմուտքը:

ՅՕԴ. 20.— Վարչութիւնը կընտրուի անդամական ժողովի կողմէ գաղտնի քէտր-

կութեամբ:

ՅՕԴ. 21.— Վարչութիւնը կստանայ եւ կրանայ մասնաճիւղի անունով եկած նամակները եւ կներկայացնէ անդամական ժողովին, կվարէ մասնաճիւղի ընթացիկ գործերը անդամական ժողովի որոշումներու համաձայն:

ՅՕԴ. 22.— Ստիպողական պարագաներու մէջ միայն, երբ հնար չկայ անդամական ժողով գումարել, վարչութիւնը կրնայ ընթացիկ գործերու համար կարգադրութիւններ ընել, որոնք պարտաւոր է ներկայացնել անդամական ժողովի վաւերացման:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅՕԴ. 23.— Կեդրոնական վարչութեան անգամ մը չկրնար ընտրուիլ վարչութեան անգամ:

ՅՕԴ. 24.— Եթէ վարչութիւնը անհող, թոյլ ու անպարտաճանաչ գտնուի, մասնաճիւղերը կրնան լուծել զայն պաշտօնավարութեան շրջանէն առաջ եւ նոր մը ընտրել:

ՅՕԴ. 25.— Կեդրոնական վարչութիւնը կներկայացնէ միութեանս գործադիր մարմինը. այն է միութեան պաշտօնական ներկայացուցիչը երկրի մարմիններու

առջեւ, եւ անոր միջոցով կհատարւին բո-
լոր պաշտօնական յարաբերութիւնները :

ՅՕԴ. 26. — Եթէ ոեւէ պատճառով
կեղերոնական վարչութեան անդամներէն
մին պակսի, անդամակցութեան կհրաւիր-
ւի ընդհանուր ժողովի քէ ստացած առա-
ւելագոյն ընկերը :

ՅՕԴ. 27. — Եթէ կեղերոնական վար-
չութեան անդամներու թիւի կէսէն աւելին
— երեք անդամ — պակսի, արտակարգ ընդ-
հանուր պատգամաւորական ժողով կըու-
մարւի նոր ընտրութիւն կատարելու հա-
մար :

ՅՕԴ. 28. — Երբ կեղերոնական վարչու-
թեան անդամներէն մին զեղծում կգործէ
ընկերական ատեանի կհրաւիրւի կեղրո-
նական վարչութեան միւս անդամներու,
ընկերոջ պատկանած մասնաճիւղին վար-
չութեանը հետ եւ ատեանի հաւասար
ձայնով քննելէ ետք պաշտօնանկ կընեն
ամբաստանեալը :

ՅՕԴ. 29. — Կեղերոնական վարչութիւնը
կրազկանայ հինգ անդամներէ, կընտրւի
ընդհանուր ժողովի կողմէն, պատրաստը-
ւած եռամսն ցանկէն մէկ տարի պաշտօ-
նավարութիւնով եւ վերընտրելի է :

ՅՕԴ. 30. — Կեղերոնական վարչութիւնը
ինք կընտրէ զիւանը, որ կրազկանայ Ա-

տենապետէ, Ատենադպիրէ, Համարակալէ
եւ մէկ Խորհրդականէ :

ՅՕԴ. 31. — Ատենապետին պարտակա-
նութիւնն է. Ա. ատենապետել կեղրոնա-
կան վարչութեան ժողովներուն, Բ. ա-
տենադպիրին հետ խորհրդակցելով հո-
գածու ըլլալ ընթացիկ գործերու անթերի
կատարումին, Գ. ատենադպիրին հետ
բանալ եւ կարգալ կեղրոնական վարչու-
թեան անունով եկած բոլոր նամակները,
Դ. ստորագրել ատենադպիրին եւ ի հար-
կին գանձապահին հետ բոլոր պաշտօնա-
կան նամակները :

ՅՕԴ. 32. — Ատենադպիրին պարտակա-
նութիւնն է. Ա. կեղրոնական վարչու-
թեան համառօտ ատենադրութիւնը արձա-
նադրել յատուկ տօմարի մէջ, Բ. գանձա-
յին խնդիրներէն զատ, ամէն տեսակ գը-
րութիւններ, չըջարեաական, նամակ եւ
այլն պատրաստել, Գ. բոլոր մասնաճիւ-
ղերու անդամներու ցանկը ունենալ եւ
նշանակել մահերը, արտաքուսածները,
հրաժարածները, Դ. խնամով պահել կեղ-
րոնական վարչութեան անունով յանձնը-
ւած բոլոր գրութիւնները, Ե. գանձապա-
հին ընկալագիրը արձանագրել ատենապե-
տին հետ եւ մասնաւոր տօմարի մէջ ար-
ձանագրել այդ գումարները, Զ. պատ-

րաստել ընդհանուր պատգամաւորական ժողովին տեղեկագիրները :

ՅՕԴ. 33.— Գանձապահին պարտականութիւնն է . Ա. ստանալ կեդրոնական վարչութեան անունով եկած դումարները եւ ընկալազբերը զրկել ատենապետի միջոցով, Բ. դրամ յանձնել կամ զրկել, ծախսեր ընել կեդրոնական վարչութեան դրաւոր որոշումով, վաւերացւած ատենապետի եւ ատենագիրի ստորագրութիւնով, արձանագրել տոմարին մէջ ելեւմուտը, կեդրոնական վարչութեան իւրաքանչիւր ժողովին ներկայացնել իր հաշիւը :

ՅՕԴ. 34.— Կեդրոնական վարչութիւնը հաւաքարար պատասխանատու է գանձապահին յանձնւած դրամին եւ հետեւարար ազատ է գանձին ապահովութեան համար ընել իր անհրաժեշտ նկատած կարգազրուութիւնները :

ՅՕԴ. 35.— Համարակալին պարտականութիւնն է կեդրոնական վարչութեան ելեւմուտը արձանագրել, նաեւ մասնաճիւղերու հաշիւները քննել :

ՅՕԴ. 36.— Կեդրոնական վարչութիւնը պարտաւոր է իր քով գտնւած պարտատ դրամը, ինչպէս նաեւ իր գրութիւնները ենթարկել ընդհանուր պատգամաւորա-

կան ժողովին :

ԵՐԿՐԻ ՊՍՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ

ՅՕԴ. 37.— Պատասխանատու մարմինը միութեան դործադէր մարմինն է երկրին մէջ :

ՅՕԴ. 38.— Պատասխանատու մարմինը կընտրւի ընդհանուր ժողովի յարմար դատած եղանակով եւ պատասխանատու է ընդհանուր ժողովին :

ՅՕԴ. 39.— Պատասխանատու մարմինը կմասնակցի միութեանս ընդհանուր պատգամաւորական ժողովին Ամերիկայի մէջ իր ընտրած ներկայացուցիչի միջոցով եւ մէկ ձայնով :

ՅՕԴ. 40.— Պատասխանատու մարմինը ընդհանուր ժողովին կզրկէ տարեկան իր տեղեկագիրը, կեդրոնական վարչութեան միջոցով :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՅՕԴ. 41.— Միութեանս բոլոր մասնաճիւղերու պատգամաւորներով կզումարւի ընդհանուր ժողովը, կեդրոնական վարչութեան յարմար դատած մէկ վայրին մէջ :

ՅՕԴ. 42.— Ընդհանուր պատգամաւորական ժողովին կմասնակցին մասնաճիւղերը իրենց թւի համեմատութեամբ իւ-

բաքանչիւր հինգի մէկ պատգամաւորի հաշուով :

ՅՕԴ. 43. — Ընդհանուր ժողովը կեղրոնական վարչութեան պատրաստած եռանուն ցանկի մը վրայէն դադտնի քէտարկութեամբ եւ քէններու երկու երրորդի մեծամասնութեամբ կընտրւի :

ՅՕԴ. 44. — Ընդհանուր ժողովի որոշումները պարտաւորիչ են միութեան բոլոր անդամներուն :

ՅՕԴ. 45. — Ընդհանուր ժողովի դէմ եղած ամէն բողոք կնեւրկայացւի յաջորդ ընդհանուր ժողովին :

ՅՕԴ. 46. — Կեղրոնական վարչութիւնը մէկ ձայնով կմասնակցի ընդհանուր ժողովին, այդ իրաւունքը տալով իր անդամներէն մէկուն :

ՅՕԴ. 47. — Պատասխանատու մարմինը զրկելով տեղեկագիրը իր ձայնի իրաւունքը կյանձնէ Ամբերիկա գտնող եւ իր վըստահութիւնը վայելող միութեան մէկ անդամին :

ՅՕԴ. 48. — Ամբերիկայի միութեանս կազմալուծւած մասնաճիւղերը իրենց դոյքերը կզրկեն կեղրոնական վարչութեան. իսկ մասնաճիւղերու անդամները իրենց հաշիւները կփակեն պատկանեալ մասնաճիւղին հետ :

ՅՕԴ. 49. — Ընդհանուր պատգամաւորական ժողովը կընայ միայն յաւելումներ եւ փոփոխութիւններ մտցնել սոյն կանոնադրին մէջ :

ՅՕԴ. 50. — Միութեան նւիրւած դրամ, դոյք եւ այլն չվերագարձւիր :

Դ Ա Դ Ա Ր Ո Խ Մ

ՅՕԴ. 51. — Ուէ պատճառով եթէ միութիւնս դադրեցնէ իր դոյութիւնը, կեղրոնական վարչութիւնը պարտաւոր է ամէն կարգի դոյքեր, շարժուն եւ անշարժ կաւածք, հնչուն դրամ եւ դիւանական գրութիւններ փոխանցել երկրի իր մարմինին իր յարմար նկատած միջոցով :

ՅՕԴ. 52. — Մասնաճիւղ մը ինքնին լուծւած կհամարւի, երբ անդամներութիւր օրինական թիւէն երեքի նւազի : Կազմալուծւած մասնաճիւղի բոլոր դոյքերը կզբաւէ կեղրոնական վարչութիւնը :

ՅՕԴ. 53. — Այն ընկերը որ միութեանս դադտնիքները դուրս կհանէ, ընկերական ատեանի կկանչւի :

